

12761



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«21» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 251 - 24

Նախաձեռնող՝

«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ

ք. Երևան, Սարալանջի փ./1 Կենտրոն

Գործունեությունը՝

Աղավնաձորի գրանողիորիպների հանքավայրի
արդյունահանման աշխատանքներ

Կոտայքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 251 - 24

«21» Նոյեմբերի 2024թ.

**Աղավնաձորի գրանողիորիտների հանքավայրի արդյունահանման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Աղավնաձոր բնակավայր

Ներածական մաս. «ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Աղավնաձորի գրանողիորիտների արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150 օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հայցվող տեղամասի հողերը համայնքային սեփականություն են, որից 1,1 հա նպատակային նշանակությունը ընդերքօգտագործման է, իսկ 3,087 հա՝ գյուղատնտեսական նշանակության արոտավայր:

Նկարագրական մաս. Աղավնաձորի գրանողիորիտների հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրում:

Հանքավայրը գտնվում է Աղավնաձոր-Կաքավաձոր ասֆալտապատ ավտոճանապարհից 620 մ դեպի հյուսիս, Մեղրաձոր-Մարմարիկ-Հրազդան ասֆալտապատ ավտոճանապարհից՝ 1,2 կմ դեպի հյուսիս հեռավորությունների վրա, հայցվող տարածքը հողաձածկ և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Հրազդան քաղաքի հետ: Հանքավայրի հեռավորությունը Հրազդան քաղաքից կազմում է 10 կմ, Աղավնաձորից՝ 1 կմ, Մարմարիկից՝ 3,1 կմ դեպի արևելք, Մեղրաձորից 5,2 կմ դեպի հարավ-արևելք, Կաքավաձոր գյուղից՝ 3,7 կմ հարավ-արևմուտք: Հանքավայրն Աղավնաձոր բնակավայրի մոտակա շինությունից գտնվում է 325 մ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը գտնվում է 1828-1960 մ բացարձակ բարձրությունների վրա:



Տեղանքն իրենից ներկայացնում է անտառագուրկ տարածք, որին բնորոշ է չոր խիստ ցամաքային կլիմայական պայմաններ:

Օրոգրաֆիկ տեսանկյունից հանքավայրի տարածքը տիպիկ լեռնային է՝ կտրտված ռելիեֆով, գետերի հովիտների նկատմամբ բլուրների զգալի բարձրություններով:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր կամ էնդեմիկ գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները: Գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության, պատմության և մշակույթի հուշարձանների հետ:

Հանքավայրի տեղամասում չկան սողանքային երևույթներ:

Աղավնածորի հանքավայրի ջրագուրկ է: Հորատանցքերում գրունտային ջրեր չեն հանդիպել: Ապարները հիմնականում ճաքճքված են և ջրաթափանց, ինչի պատճառով էլ մթնոլորտային տեղումների ջրերը արագ ներթափանցում են ավելի խորը հորիզոնականներ:

Գրանոդիոհիտները ներկայացված են խիտ, միատարր ապարներով, ունեն հիպիդիոմորֆ-հատիկավոր կառուցվածք, հանքաքարի հիմնական բաղադրությունը կազմում են՝ պլագիոկլազը, կալիումական դաշտային սփաթը, պիրոքսեն, բիոտիտը, սֆենը, ապատիտը, քվարցը, մագնետիտը և այլն:

Հանքավայրի հաշվեկշռային պաշարները 01.01.1981թ. դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 23.09.1981թ. N 8838 արձանագրությամբ, ընդհանուր A+B կարգերով 525 հազար մ³ քանակով, այդ թվում՝ A կարգով՝ 83 հազար մ³, B կարգով՝ 442 հազար մ³:

Հանքավայրը շահագործվել է մինչև 2021թ. և հանքավայրի տարածքը մասամբ խախտված է:

Հանքավայրում 01.01.2023թ. դրությամբ պաշարների մնացորդը կազմում է ընդհանուր A+B կարգերով 483.46 հազար մ³, այդ թվում՝ A կարգով՝ 70.834 հազար մ³, B կարգով՝ 412.626 հազար մ³:

Հանքավայրը վերագրվել է «Պինդ օգտակար հաածոների դասակարգման» 1-ին խմբին: Պաշարները հաստատվել են որպես հումք « Բլոկներ բնական քարերից երեսապատման իրերի արտադրության համար» /ԳՈՍՍ 9479-76/ և «Երեսապատման սալիկներ կտրված բնական քարերից» /ԳՈՍՍ 9480-77/:

Հանքավայրի աշխարհագրական կոորդինատներ են՝
40° 34' 53 " - հյուսիսային լայնության
44° 42' 33 " - արևելյան երկայնության

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ծավալներից՝ բացահանքի շահագործումը նախատեսվում է իրականացնել բաց լեռնային աշխատանքներով, հանքարդյունահանման աշխատանքները՝ մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Հայցվող տարածքի կոորդինատները (ըստ Arm WGS-84 համակարգի) հետևյալն են.

1. Y=8475322.0000 X=4494184.0000
2. Y=8475406.0000 X=4494254.0000
3. Y=8475566.0000 X=4494366.0000
4. Y=8475676.0000 X=4494204.0000
5. Y=8475486.0000 X=4494130.0000

Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին լցակույտ տեղափոխումով:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 315 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 210 մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը՝ 16.0 մ,



- մակաբացման ապարների ամենամեծ հզորությունը՝ 6.0 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 483460 մ³,
- արդյունահանվող /կորզվող/ պաշարների քանակը՝ 455600 մ³,
- մակաբացման ապարների քանակը՝ 192600 մ³,
- բացահանքի օտարման մակերեսը՝ 4.187 հա:

Տարեկան արտադրողականությունը կկազմի՝ 46938 մ³ մարվող պաշար: Տարեկան արդյունահանվող պաշարները՝ 45560 մ³:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 10.3 տարի:

Հանքավայրի մշակման համար ընտրված համակարգի տարրերը կլինեն հետևյալը՝

- հանքաստիճանի բարձրությունը՝ 5 մ,
- անվտանգության բերմայի լայնությունը՝ 2.0 մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը՝ 90°;
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 18-20 մ:

Նախատեսվում են հետևյալ արդյունահանման աշխատանքները՝ միաքարի անջատում զանգվածից, միաքարի հեռացում հանքախորշից, միաքարի մասնատում բլոկների և դրանց կոպտամշակում, միաքարի բարձում տրանսպորտային միջոցների մեջ, թափոնների /խճի հումքի/ հեռացումը:

Միաքարի անջատումը զանգվածից կիրականացվի էքսկավատորի վրա սարքավորված հիդրավլիկական մուրճի միջոցով, տեղափոխումը հանքախորշից դեպի մասնատման վայր՝ բուլդոզերի օգնությամբ: Միաքարի մասնատումը բլոկների կիրականացվի հորատասեպային եղանակով, բլոկների կոպտամշակումը՝ հիդրավլիկ մուրճի միջոցով: Բլոկները և խճի հումքի իրացումը կկատարվի սպառողի տրանսպորտային միջոցներով, իսկ մակաբացման ապարների տեղափոխումը դեպի արտաքին լցակայան՝ ավտոինքնաթափի միջոցով:

Հանքավայրի բացումը կիրականացվի նրա հարավ-արևմտյան մասին մոտեցող գրունտային ճանապարհի 1790 մ նիշ ունեցող հորիզոնից դեպի բացահանքի 1950 մ բարձրության նիշ ունեցող հանքաստիճան՝ գրունտային ճանապարհի անցումով: Բացահանքի բոլոր հորիզոնների բացումը կիրականացվի այդ ճանապարհից հորիզոնական կտրող կիսախրամների անցումով՝ բացառությամբ 1810 մ նիշ ունեցող հորիզոնի, որի բացումը կիրականացվի թեք խրամի միջոցով:

Բացահանքի հանույթաբարձման աշխատանքները նախատեսվում է հակառակ բահով սարքավորված 1 հատ DOOSUN SOLAR 500LC-V մակնիշի էքսկավատորով:

Բուլդոզերային աշխատանքները բացահանքի շահագործման ժամանակ կլինեն՝ բլոկների տեղափոխումը մասնատման վայր, մակաբացման ապարների և արտադրական թափոնների տեղափոխումը և կուտակումը բացահանքում ու լցակայանում: Դրանց տարեկան ծավալները կկազմեն 9567,6 մ³, 55252,4 մ³ և 19260 մ³:

Հանքավայրի մակաբացման ապարները՝ 192600 մ³, 4,6 մ միջին հզորությամբ, ներկայացված հողաբուսական շերտով՝ 1050 մ³, գրանոդիորիտների բեկորներ պարունակող ավազակավերով և կավավազներով՝ 7800 մ³, ջարդոտված հողմնահարված գրանոդիորիտներով՝ 183750 մ³ ծավալով շահագործման ընթացքում ավտոինքնաթափով կտեղափոխվեն բացահանքի սահմաններից դուրս՝ նրա հարավ-արևմտյան մասում ձևավորվող արտաքին լցակայան: /N1/ լցակայանում առանձին-առանձին կտեղադրվեն հողաբուսական շերտի ապարները, իսկ ավազակավերն ու հողմնահարված ջարդոտված գրանոդիորիտները կտեղադրվեն /N 2/ լցակայանում:

Հողաբուսական շերտի /N1/ լցակայանը՝ 2.0 մ միջին բարձրությամբ և 880 մ² մակերեսով կլինի լցակայանային տնտեսության արևելյան մասում, վերևի հարթակի նիշը կլինի 1792.0 մ, մակերեսը՝ 560 մ², շեպի առավելագույն թեքությունը՝ 350: Ավազակավերի ու հողմնահարված



ջարդուոված գրանդիորհիտների արտաքին լցակույտը /N 2/ կգբաղեցնի 19700 մ² մակերես, վերևի հարթակի նիշն կլինի 1810 մ, մակերեսը՝ 3700 մ², շեփ առավելագույն թեքությունը՝ 35°:

Մակաբացման ապարների տեղափոխումը մինչև 1.5 կմ միջին հեռավորության վրա գտնվող արտաքին լցակույտ կիրականացվի MERSEDES-BENZ AROCS 4145K մակնիշի ավտոինքնաթափերի միջոցով:

Արտադրական թափոնների և մակաբացման ապարների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել 3.2 մ³ շերտի տարողությամբ DOOSUN SOLAR 500LC-V մակնիշի էքսկավատորի միջոցով:

Բացահանքի շահագործման ընթացքում կլինեն օգտակար հանածոյի երկու տեսակի կորուստներ՝ կորուստներ, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում, այդ կորուստները կկազմեն՝ 27860 մ³ (5.76%), և շահագործական կորուստներ, որոնք տեղի են ունենում օգտակար հանածոն ավտոինքնաթափերով տեղափոխման ժամանակ, այդ կորուստները չնչին են և չեն հաշվառվում:

Բացահանք ջրամատակարարումը կկատարվի խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Տեխնիկական ջրամատակարարումը կիրականացվի MERSEDES-BENZ AROCS ջրցան մեքենայով, խմելու ջրի մատակարարումը՝ ՍԿԻ-ԵԼԵ-1.4 ջրի ցիստեռնով:

Աղավնածորի գրանդիորհիտների արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնածին ճնշումներ կդրսևորվեն շրջակա միջավայրի բնական բաղադրիչների (հողային ռեսուրսներ, օդային ավազան, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա:

Բացահանքում արտանետումները կապված կլինեն ապարների արդյունահանման, բարձման և լեռնային զանգվածի տեղափոխման աշխատանքների հետ: Հայցվող տարածքում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներն են հանդիսանալու բացահանքը, ճանապարհը և լցակույտը:

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերը կլինեն՝ անօրգանական փոշին /օգտակար հանածոյի անջատումը զանգվածից, բուլդոզերայի, բարձման և տրանսպորտի աշխատանքներից, լցակույտերից/, ազոտի և ածխածնի օքսիդները և ածխաջրածինները /դիզելային և բենզինային վառելիքով աշխատող մեքենաներից/:

Շրջակա միջավայրի գնահատման հաշվետվությունում ներկայացված է նաև «Эко Центр» ծրագրով կատարված արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկ, որի արդյունքների համաձայն արտանետվող բոլոր նյութերի համար գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում տվյալ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Քանի որ հանքավայրում գետեր, գետակներ և գրունտային ջրերի հորիզոններ չկան բացահանքի շահագործման ընթացքում մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն դրսևորվելու: Ջրային ռեսուրսների աղտոտում ևս չի կանխատեսվում, քանի որ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում, իսկ փոշենստեցման համար ջրցանը նախատեսվում է իրականացնել այնպիսի ծավալներով, որը չի առաջացնի արտահոսք:

Կենցաղային կեղտաջրերը նախատեսվում է կուտակել նախապես կառուցված, բետոնապատ անթափանց ջրհորի մեջ, որը պարբերաբար կդատարկվի համապատասխան ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման ընթացքում հնարավոր են հողային ծածկույթի վառելիքաքսուրային նյութերով, աղբով աղտոտում, ինչը կանխելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները կշահագործվեն սարքին վիճակով՝ վառելիքի և յուղի պատահական արտահոսքը բացառելու



համար: Օգտագործված յուղերը կհավաքվեն մետաղյա տակաոններում, կպահպվեն հատուկ առանձնացված տեղերում հետագա ուտիլիզացման նպատակով: Արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում կտեղադրվեն աղբամաններ: Առաջացած մետաղի թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և անվադողեր/ կհավաքվի և կիրացվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններում:

Տարածքի կենսաբազմազանության, բուսական և կենդանական աշխարհի վրա արդյունահանման աշխատանքների ազդեցությունը կլինի աննշան, քանի որ տարածաշրջանն ընդհանուր առմամբ հանդիսանում է տնտեսապես յուրացված գոտի: Հնարավոր ազդեցությունները կմեղմվեն ու կբացառվեն շինարարական մեղմացնող միջոցառումների կիրառման, տեխնիկա-տրանսպորտային միջոցների ճանապարհից և արտադրական հրապարակներից դուրս երթևեկության կազմակերպման շնորհիվ:

Բացահանքի շահագործման ընթացքում ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝ 5285515 ՀՀ դրամ/տարի:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մակաբացման ապարները, քսայուղերի և նավթամթերքների մնացորդներ, բանեցված դողեր և այլն: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածակագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Հանքավայրում աղմուկի առաջացման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման, բարձման և տեղափոխման աշխատանքները, լցակույտի ձևավորումը, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը: Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 80դԲԱ և աղմուկի մակարդակը չի գերազանցելու թույլատրելի սահմանը: Հանքավայրի շահագործման ընթացքում տրանսպորտ մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքից կառաջանա թրթռում, ինչի սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115 դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112 դԲԱ: Ըստ գործող նորմատիվ պահանջների՝ աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կկազմի 45 դԲԱ: Ըստ գնահատման հաշվետվության աղմուկի և տատանումների կառավարման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելման, մեղմման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ որոնք են՝

- լեռնային տեխնիկայի շարժիչների կարգավորված լինել, տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների վրա գազերի արտանետման կատալիտիկ չեզոքացուցիչների տեղադրում, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, մերձատար ճանապարհների ջրցանում,
- ներհանքային ճանապարհների բարեկարգում, խճապատում,
- արտադրական տարածքի կանաչապատում արագ աճող ծառատեսակներով կամ թփերով և այլն:

Նախատեսված են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազում, անհողմություն, մառախուղի առաջացում), հավաթարային, արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմում:



կանխարգելման բնապահպանական միջոցառումներ, որոնք առավել մանրամասն նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Բացահանքի շահագործման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել բացահանքի հատակի՝ 1550 մ², լցակույտի վերին հարթակի մակերեսի 3700 մ² և արդյունաբերական հրապարակի՝ 250 մ², ընդամենը՝ 5500 մ² ռեկուլտիվացիոն աշխատանքներ: Ներքին լցակույտը կձևավորվի շահագործման 10-րդ տարվա ընթացքում:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո կիրականացվի նաև կենսաբանական ռեկուլտիվացիա, որի համար կօգտագործվի N1 լցակույտում պահեստավորված 1050 մ³ ծավալով հողաբուսական շերտը: Կենսաբանական ռեկուլտիվացիայի ընթացքում բացահանքի հատակի, արդյունաբերական հրապարակի և լցակույտի հարթակի բուլդոզերով հարթեցված մակերեսները պարարտացվելու են գրանուլացված կենսահումուսով, օրգանահանքային պարարտանյութերով, այնուհետև կատարվելու է տարածաշրջանին բնորոշ սերմերի ցանքս:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է 1269.4 հազ. ՀՀ դրամ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 1544.4 հազ. ՀՀ դրամ, գումարը կհատկացվի շրջակա միջավայրի պահպանության դրամազվիսին՝ Կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Աղավնաձորի գրանողիորիտների արդյունահանման աշխատանքների շահագործման ընթացքում կիրականցվեն նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ բացահանքի տարածքում ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթ մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են՝ ածխածնի օքսիդի համար՝ 5 մգ/մ³, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2 մգ/մ³, մրի համար՝ 0.15 մգ/մ³:

2. Արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

3. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

4. Վայրի բնության, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

5. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ հանքի տարածքում՝ ամսական մեկ անգամ:

Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 550.0 ՀՀ հազ.դրամ:

Պարճառաքանական մաս. Կոտայքի մարզի Աղավնաձորի գրանողիորիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջների համապատասխան:

Աղավնաձորի գրանողիորիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շարջակա միջավայրի ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային քննարկմանը հարց է բարձրացվել տարածքում պատմության և մշակույթային անշարժ հուշարձանի «Դամբարանադաշտի Ք.ա. XIX» պահպանման գոտիների վերաբերյալ: Ըկերության կողմից ներկայացվել է պարզաբանում, ըստ որի հայցվող տարածքը



Դամբարանադաշտի պահպանման գոտուց գտնվում է նվազագույնը 100 մ հեռավորության վրա, իսկ բացահանքը սպասարկող ավտոճանապարհը չի անցնելու Դամբարանադաշտի պահպանման գոտու սահմաններով:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Ծաղկաձոր համայնքում և Աղավնաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Առկա է «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դրական կարծիքն այն մասին, որ հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի հուշարձաններ, ինչպես նաև հնագիտական օբյեկտների արտաքին նշաններ և հետքեր չկան:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունն օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումները՝ հանքավայրի արդյունահանման աշխատանքների իրականացման ժամանակ բացառել պայթեցման աշխատանքները, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:

2. Արդյունահանման աշխատանքներն իրականացնելիս բացառել հայցվող տարածքին մոտ գտնվող դամբարանադաշտի պահանման գոտում որևէ աշխատանքների իրականացումը: Աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության



կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմինին:

4. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/:

5. Իրականացնել հաշվետվությամբ նախատեսված արտադրական տարածքի, հանքավայրի եզրագծով կանաչապատում՝ երկշերտ արագ աճող ծառատեսակներով, թփերով, ինչը սահմանված է նաև հաշվետվությամբ:

6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ-ի կողմից Կոտայքի մարզի Աղավնաձորի գրանողիորիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նասիրյան